ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Տպագրված է
ընդամենը 5 օրինակ
Օրինակ 1
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի
Նորք-Մարաշի
տարածքային բաժնի կողմից

«13» 01 2006թ.

Գրանցման թիվ 273.210.04175
Վկայական 03ԼԸ 070829

Նորք-Մարաշ Տ/Բ պետ՝
Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՄԱՆ

«20» դեկտեմբերի 2005 թ. №261-Ա

ք. Երևան

## «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Անտառների պետական մոնիտորինգի համակարգի ներդրման մասին» N 1152-Ն որոշման 4-րդ կետի «գ» ենթակետի 2-րդ մասի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի իրավաբանական վարչության օրենսդրական բարեփոխումների բաժնի պետ Գ. Ավագյանին լիազորել օրենքով սահմանված կարգով իրականացնել «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցման գործընթացը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարն տեղակալ Ս. Գալստյանին:

Նախարար Դ. Լոքյան

Հավելված N
Հայաստանի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2005թ. դեկտեմբերի 20-ի
N261-Ա հրամանի

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կենտրոն) չունի ստանալու եկամուտ հետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կենտրոնն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի «Անտառների պետական մոնիտորինգի համակարգի ներդրման մասին» N1152-Ն որոշման:

3. Կենտրոնի գործունեությունն է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, սույն կանոնադրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

4. Կենտրոնն ունի գործունեության հաշվեկշիռ, սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ, Հայաստանի Հանրապետության պետական պատկերով և իր հայերեն անվանմամբ կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Կենտրոնը, որպես նեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կենտրոնը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

6. Կենտրոնը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Կենտրոնի կանոնադրությունը նրա հիմնադիր փաստաթուղթն է:

8. Կենտրոնը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9. Կենտրոնի անվանումն է՝

| | |
|---|---|
| հայերեն լրիվ՝ | «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| հայերեն կրճատ՝ | «ԱՊՄԿ» ՊՈԱԿ |
| ռուսերեն լրիվ՝ | государственная некоммерческая организация "Центр лесного государственного мониторинга" |
| ռուսերեն կրճատ՝ | ГНКО "ЦЛГМ" |
| անգլերեն լրիվ՝ | "Forest state monitoring center" state non commercial organization |

անգլերեն կրճատ՝ "FSMC" SNCO

10. Կենտրոնի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Արմենակյան 129:

## 2. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

11. Կենտրոնի գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով ուսումնասիրությունների իրականացումը,

բ) անտառային պետական մոնիտորինգի իրականացումը:

## 3. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

12. Կենտրոնը՝

ա) մասնակցում է անտառների և անտառային հողերի վիճակի և դրա բացասական ներգործության ու հետևանքների մոնիտորինգի կազմակերպման, պետական բարդաչափությանն և ռազմավարության, դրանց կենսագործման պետական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,

բ) իրականացնում է անտառների և անտառային հողերի վրա սարքեր, սենսորի ներգործությունների ու դրանց հետևանքների, ինչպես նաև ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով դիտարկումներ, գնահատումներ և կանխատեսումներ,

գ) ապահովում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության ու դրա հետևանքների, ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման նպատակով դիտարկումների, հավաքների հավաքագրման, դասակարգման, մշակման, վերլուծության և տարածական տեղեկությունների տեխնիկական միջոցների ու համակարգերի անխափան աշխատանքն ու կատարելագործումը, ստացված տեղեկատվության հավաստիության անհրաժեշտ մակարդակը. մեծացնում է միջոցներ այդ աշխատանքները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ ներդնելու, մոնիտորինգի գիտացանցը և նյութատեխնիկական բազան զարգացնելու ուղղությամբ,

դ) ապահովում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապօրինի հատումների, ապօրինի հատումների արդյունքում բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխման, ինչպես նաև այդ երևույթների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով ապօրինի հատումների դեմ պայքարի աշխատանքների թափանցիկությունը,

ե) մշակում, կազմում և տարածում է անտառների վրա ներգործությունների վերաբերյալ կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ՝ տեղեկագրերի, բուկլետների և տեղեկատվական այլ միջոցների տեսքով,

զ) Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության, դրա հետևանքների և ապօրինի հատումների, բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրումը, կենտրոնացված հաշվառումը, մշակումը և տրամադրումը իրավասու պետական մարմիններին,

է) մասնակցում է ապօրինի հատումների և անտառանյութի՝ անտառից դուրսբերման մոնիտորինգի չափորոշիչների մշակման աշխատանքներին,

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է անտառների և անտառային հողերի վրա ներգործության մոնիտորինգի միջազգային ու տարածաշրջանային համատեղ ծրագրերի իրականացման, տեղեկատվության փոխանակման գլոբալ և տարածաշրջանային միասնական համակարգերի ձևավորման և զարգացման աշխատանքներին:

## 4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կենտրոնի կառավարման մարմիններն են՝

ա) հիմնադիրը՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության,

բ) լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը,

գ) գործադիր մարմին (տնօրեն):

14. Կենտրոնի հիմնադիրն իրավունք ունի վերջնական լուծում տալու կենտրոնի գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

15. Հիմնադրի լիազորություններն են՝

ա) կենտրոնի հիմնադրումը,

բ) կենտրոնի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) կենտրոնի վերակազմակերպումը և լուծարումը,

դ) օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

16. Լիազորված պետական մարմինը

ա) հաստատում է կենտրոնի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ,

բ) ստեղծում է կենտրոնի հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ,

գ) հաստատում է կենտրոնի սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը,

դ) ստեղծում է կենտրոնի լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

ե) սահմանում է կենտրոնի կառավարման համակարգը,

զ) իրականացնում է կենտրոնի ընդհանուր կառավարումը, ապահովում դրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

է) ձևավորում է կենտրոնի կառավարման մարմինները, իրականացնում դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

ը) իրականացնում է վերահսկողություն կենտրոնի գործունեության նկատմամբ,

թ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կենտրոնի տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրությունները և ցուցումները,

ժ) լսում է կենտրոնի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ժա) իրականացնում է վերահսկողություն կենտրոնի սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս նրա գույքը օտարելու կամ վարձակալության հանձնելու համար,

ժբ) իրականացնում է վերահսկողություն կենտրոնին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժգ) հաստատում է կենտրոնի տարեկան հաշվետվությունները ու տարեկան հաշվեկշիռը,

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

17. Կենտրոնի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

18. Կենտրոնի տնօրենն իրեն վերապահված լիազորության սահմաններում ղեկավարում է կենտրոնի գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի ու լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

19. Լիազորված պետական մարմնի ղեկավարը հիմնադրի անունից կենտրոնի տնօրենի գործառույթներ իրականացնող անձի հետ կնքում է պայմանագիր:

20. Կենտրոնի տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

21. Կենտրոնի տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կենտրոնին և (կամ) պետությանը պատճառած վնասի համար:

22. Տնօրենի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

23. Տնօրենը պարտավոր է չկատարել վերադաս կառավարման մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

24. Տնօրենի բացակայության դեպքում, նրան պաշտոնի նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

25. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կենտրոնի անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կենտրոնի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս կենտրոնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

ե) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

զ) սահմանում է կենտրոնի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

է) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կենտրոնի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր,

ը) օրենքով և կենտրոնի կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կենտրոնի կառավարման մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

26. Կենտրոնի սեփականությունը ձևավորվում է հիմնադրի կողմից՝ սեփականության իրավունքով նրան հանձնվող և, իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

27. Կենտրոնն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենքներին, հիմնադրի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

28. Կենտրոնին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

29. Կենտրոնի սեփականության պահպանման հոգսը կրում է կենտրոնը:

30. Կենտրոնի սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

## 6. ԿԵՆՏՐՈՆԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

31. Կենտրոնին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է գույք:

32. Կենտրոնն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել և հանձնել անհատույց օգտագործման:

33. Կենտրոնն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, ոչ ավելի քան մեկ տարի ժամկետով, եթե հիմնադրի կողմից այլ բան սահմանված չէ:

34. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կենտրոնի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

35. Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած ամրաժամերի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

36. Հիմնադրի կողմից գույքը կենտրոնին ամրացնելը չի կարող հիմք հանդիսանալ այդ գույքի նկատմամբ հիմնադրի իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

37. Հիմնադրի կողմից կենտրոնին ամրացված գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կենտրոնի կողմից օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

## 7. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

38. Կենտրոնի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

39. Կենտրոնը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

## 8. ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

40. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

41. Կենտրոնի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

42. Կենտրոնը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

43. Կենտրոնը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

44. Կենտրոնի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

| | |
|---|---|
| ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2010 թվականի<<14 >> << հոկտեմբեր>>-ի<br>N 195-Ա հրամանի | Տպագրված է<br>ընդհամենը 5 օրինակ<br>ՕՐԻՆԱԿ 3<br>ԳՐԱՆՑՎԱԾ Է<br>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ<br>ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐՔ ՄԱՐԱՇ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ<br>ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 13.01.2006թ<br>Գրանցման թիվ 73.210.04175<br>Վկայական 03Ա070819<br>Նորք-Մարաշ Տ/Բ պետ<br><<____>> _____ 2010թ.<br>_____Տ/Բ պետ՝<br>Ա. Սարգսյան<br><br>Թիվ 1/3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշի արածքային բաժնի կողմից<br><<03>> 11 2010թ<br>Նորք-Մարաշ Տ/Բ պետ<br>Ստորագրության |

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

**<<Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության**

Կանոնադրության 10-րդ կետի <<Արմենակյան 129>> բառերը փոխարինել <<Մամիկոնյանց 39 ա>> բառերով: